

<< ՀՀ Արագածոտնի մարզի Ազարակավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ` անգլերենի /20 դասաժամ/ ուսուցչի թափուր աշխատեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով` թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անկացվում է` ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաղթերը.

1. Դիմում /Ձև 1/, լուսանկար 3 x 4

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ

/դիպլոմ/ 3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան` աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը` /առկայության դեպքում/,

5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,

6. Այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները` Նաև զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում` հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31–ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր` ժամը 10:00- ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի` ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 17-ին` ժամը 13:00-ին, Ազարակավանի միջնակարգ դպրոցում. հասցեն` Արագածոտնի մարզ, գ. Ազարակավան , փ 5, 2 12

Տեղեկությունների համար զանգահարել 077 38-99-10 հեռախոսահամարով: